

5.3. ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ՊԼԱՆՆԵՐԻ ԿԱԶՄՈՒՄԸ

5.3.1 Մարդահամարային շրջանացում

2015թ. օգոստոս-սեպտեմբեր ամիսներին, ԼՂՀ ԱՎԾ-ի շրջանային բաժինների կողմից, տների (շինությունների) և գյուղական բնակավայրերի ցուցակների, համապատասխան քարտեզագրական նյութերի, ինչպես նաև ծանրաբեռնվածության սահմանված նորմաների հիման վրա նախապատրաստվեց և կազմվեց ԼՂՀ 2015թ. մարդահամարի նախապատրաստման և անցկացման կազմակերպման պլաններն (այսուհետ կազմպլան) ըստ Ստեփանակերտ քաղաքի և ԼՂՀ շրջանների, որով սահմանվել են.

- տարածքներում մարդահամարի, հրահանգչական և հաշվային տեղամասերի սահմանները (մարդահամարային շրջանացում),

- դրանցում անհրաժեշտ մարդահամարային կադրերի թվաքանակը, նրանց հավաքագրման, ուսուցման, հրահանգավորման և պատրաստվածության ստուգումներն անցկացնելու ժամկետները,

- բնակչության շրջանում մարդահամարի անցկացմանն առնչվող զանգվածային լուսաբանման հետ կապված միջոցառումների պլանի մշակումը: Մարդահամարի կազմպլանի կազմումն իրականացվել է համապատասխան նորմատիվային ակտով սահմանված դրույթներով ԼՂՀ ԱՎԾ շրջանային բաժինների պետերի կողմից՝ մարդահամարի աշխատանքներն համակարգողների մասնակցությամբ: Մարդահամարի շրջանացման համար հիմք են հանդիսացել ցուցակագրմամբ ձեռք բերված տվյալները, քաղաքների և խոշոր գյուղերի սխեմատիկ հատակագծերը և տարածքների քարտեզները, ինչպես նաև մարդահամարային տեղամասերի համար սահմանված նորմատիվները: Ըստ ԼՂՀ 2015թ. մարդահամարի ամփոփ կազմակերպման պլանի հանրապետության ողջ տարածքը բաժանվեց 9 մարդահամարի, 90 հրահանգչական և 501 հաշվային տեղամասերի: Փաստացի ձևավորված տեղամասերի քանակն արտացոլված է թիվ 1 սխեմատիկ պատկերում:

Ինչպես երևում է սխեմատիկ պատկերից, հանրապետության ողջ տարածքը բաժանվել է 5 հարթության ըստ ուղղահայաց՝ սուբորդինացիոն ենթակայության սկզբունքի: Յուրաքանչյուր հարթության ստորաբաժանումների համար մշակվել և գործողության մեջ են դրվել դրանց լիազորությունները և պատասխանատվությունները սահմանող նորմատիվային փաստաթղթերը, որոնք ուղղված են եղել ստորին հարթություններում գտնվող ստորաբաժանումների ինքնակարգավորման մակարդակի բարձրացմանը, դրանով իսկ վերին հորիզոնի ստորաբաժանումների օպերատիվ գործընթացների զծով ծանրաբեռնվածության: Նկարագրվածը կոչված էր նպաստելու վերին հորիզոնի օղակների վերահսկիչ-հրահանգչական լիազորությունների արդյունավետությանը:

ԼՂՀ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ
ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐՆ
ԸՍՏ ՎԵՐԱԴԱՍՈՒԹՅԱՆ (5 ՀԱՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ՝ I-V)

